Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-428-28.12.2013-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 93-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1 մասով՝

«1.1 ««Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի իմաստով խոշոր ընկերությունում ընկերության աուդիտն իրականացնող անձը կամ վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) շահագրգռվածության առկայությամբ խոշոր գործարքի կնքման որոշումն ընդունելուց հետո՝ մինչև պայմանագրի կնքումը, տալիս է եզրակացություն գործարքի՝ սույն օրենքի պահանջներին, ինչպես նաև շուկայական արժեքին համապատասխանության վերաբերյալ:»:

Հոդված 2. Օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1 մասով՝

«1.1. Ընկերությունը պարտավոր է շահագրգռվածության առկայությամբ խոշոր գործարք կնքելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ մինչև պայմանագրի կնքումը գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև սույն օրենքի 93-րդ հոդվածի 1.1 մասով սահմանված եզրակացությունը հրապարակել www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ կատարված առաջարկությունների

h/h	Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1.	ԱԺ պատգամավորներ՝ Խոսրով Հարությունյան, Կարինե Պողոսյան	1. Նախագծի 2-րդ հոդվածում «5 աշխատանքային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «մինչև պայմանագրի կնքումը» բառերով, իսկ «տեղեկատվությունը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքի 93-րդ հոդվածի 1.1 մասով սահմանված եզրակացությունը» բառերով:	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:
2.	ՀՀ կառավարություն	1. Նախագծի 1-ին հոդվածում «Նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով մեկ միլիարդ դրամից ավել շրջանառություն ունեցող» բառերը փոխարինել ««Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի իմաստով խոշոր» բառերով:	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:
		2. Նախագծի 3-րդ հոդվածում «հրապարակմանը հաջորդող» բառերը փոխարինել «հրապարակման օրվան հաջորդող» բառերով:	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություն: